Բոգդան Բ. Աթանեսյան[1]

«Թրամփի երթուղին» տարածաշրջանային երկրների շահերի համատեքստում[2]

Անոտացիա

Հոդվածում վերլուծվում են ԱՄՆ-ի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև 2025 թ. օգոստոսի 8-ին ստորագրված հռչակագրի աշխարհաքաղաքական հետևանքները: Ուշադրության կենտրոնում է «Թրամփի երթուղին՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» (TRIPP) նախագիծը, որը դիտարկվում է ոչ այնքան որպես խաղաղարար նախաձեռնություն, որքան որպես Հարավային Կովկասում ռազմավարական հաղորդակցությունների նկատմամբ ԱՄՆ-ի գերիշխող ռազմաքաղաքական վերահսկողության հաստատելու գործիք:

Հեղինակն այն կարծիքին է, որ տվյալ նախագիծը տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ոչ պաշտոնական ներդրման ձև է, ինչը համալիր երկընտրանքներ է ստեղծում տարածաշրջանային դերակատարների համար: Մանրամասն վերլուծվում են Վրաստանի (մտահոգություն տարանցիկ կարգավիճակի կորստի կապակցությամբ), Իրանի (պառակտում բարեփոխականների և պահպանողականների միջև) և Ռուսաստանի (սպասողական մարտավարություն նախագծի վարկաբեկման համապատկերում) հակասական արձագանքները: Թուրքիայի դիրքորոշումը դիտարկվում է որպես երկիմաստ. չնայած հրապարակային աջակցությանը, Անկարան կարող է հայտնվել պարտվողի դերում, քանի որ TRIPP-ը նրան առանցքային շահառուից վերածում է Վաշինգտոնի կողմից վերահսկվող խաղացողի:

Եզրահանգում է արվում, որ TRIPP-ն ԱՄՆ-ի ռազմավարության՝ ՌԴ-ին և ԻՀՀ-ին զսպելու, ինչպես նաև չինական առաջխաղացումը կասեցնելու բացակայող օղակն է, ինչը հիմնովին փոխում է անվտանգության ճարտարապետությունն ու լոգիստիկ հոսքերը Սևծովյան-Կասպյան տարածաշրջանում:

Բանալի բառեր. *Թրամփի երթուղի (TRIPP), Հայաստան, Ադրբեջան, ԱՄՆ, Հարավային Կովկաս, տրանսպորտային հաղորդակցություններ, աշխարհաքաղաքականություն, Ռուսաստան, Իրան, Թուրքիա, Վրաստան, ՆԱՏՕ, «Զանգեզուրի միջանցք», Շանհայի համագործակցության կազմակերպություն:*

1. «Թրամփի երթուղին». ԱՄՆ-ի ռազմավարական նպատակներն ու դրանց աշխարհաքաղաքական հետևանքները

ԱՄՆ-ի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև 2025 թ. օգոստոսի 8-ին ստորագրված՝ խաղաղության նախապատրաստման և հայկական Սյունիքով

[1] Հրապարակախոս, վերլուծաբան, վավերագրող ռեժիսոր: Հեղինակ է ավելի քան 1000 լրագրողական և քաղաքական-վերլուծական հոդվածների և 400 հեռուստատեսային վավերագրական տեսահոլովակների: Աշխատել է «Հ1», «ԱՐ», «Երկիր Մեդիա» հեռուստաընկերություններում: Նա համագործակցել և եղել է «Голос Армении», Aysor.am, Voskanapat, «Ազատ Արցախ» և այլ պարբերականների ու լրատվական կայքերի թղթակից:

[2] Հոդվածը բերվում է թարգմանաբար՝ ռուսերենից: Բնագիրը խմբագրություն է ներկայացվել 14.08.2025 թ.:

հաղորդակցությունների ճակատագրի մասին հռչակագիրը դարձել է միջազգային օրակարգի կենտրոնական իրադարձությունը: Ինչպես և սպասվում էր, ստորագրված փաստաթղթերը անբեկանելի վերջակետ չեն դրել Հարավային Կովկասում 35-ամյա հակամարտությանը, սակայն ամրագրել են ճգնաժամը լուծելու և բոլոր հակասությունները կարգավորելու կողմերի «*սկզբունքային պատրաստակամությունը*»՝ «*ի շահ տարածաշրջանում խաղաղության և բարգավաճման*»: Որոշ վերլուծաբանների կարծիքով՝ Դոնալդ Թրամփին հաջողվել է այս նախաձեռնությունը ներկայացնել հնարավորինս հանդիսավոր «*փաթեթավորմամբ*», սակայն աղմկահարույց միջոցառման արդյունքները միայն հաստատել են, որ իրական խաղաղությունը դեռ շատ հեռու է[3]:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ջանքերի համատեքստում հայ-ադրբեջանական գործերի փաթեթում Դ. Թրամփի թիմի ձեռք բերած կարևորագույն ակտիվը դարձավ «*Թրամփի երթուղին՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման*» (TRIPP) ստեղծման մասին պայմանավորվածությունը: ԱՄՆ-ը չի ստանձնել Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության երաշխավոր լինելու պարտավորությունները և չի ստորագրել համաձայնագրի որևէ կետի տակ, որը սահմանում էր ԱՄՆ-ի գործողությունները կողմերից մեկի կողմից պայմանավորվածության խախտման դեպքում, բայց փոխարենը ստացել է Առաջավոր Ասիայի տարածաշրջանային անվտանգության և առևտրա-էներգետիկ լոգիստիկայի համատեքստում առանցքային նշանակություն ունեցող միջանցքի փաստացի կառավարման իրավունք: Մի շարք փորձագետների պնդումների համաձայն՝ ԱՄՆ-ը հաջողությամբ խուսափել է կողմերին ստանձնած պարտավորությունների կատարման համար իրավական և քաղաքական պարտավորվածություններից, ինչը բացատրվում է երկարաժամկետ ջանքեր և լիակատար ուշադրություն պահանջող խաղաղապահ աշխատանքի ծանր բեռն իր վրա վերցնելու Վաշինգտոնի դժկամությամբ: Օրինակ՝ անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս է ամերիկյան կողմը մտադիր գործել, եթե Ադրբեջանն ու Հայաստանը վերսկսեն լարվածության սրացումը սահմաններին, կամ տարածքների սահմանազատման ու սահմանագծման հարցը փակուղի մտնի: Պարզ չէ նաև, թե ի՞նչ մեխանիզմներով է Վաշինգտոնը որոշելու խաղաղ համաձայնագրերի դրույթները խախտած կողմին և պատասխանատվության ենթարկելու նրան:

Այս անորոշություններն ԱՄՆ-ի վերլուծաբաններին դրդել են եզրակացնելու, որ ստորագրված հռչակագիրը խախտման դեպքում գործնական իրավական հետևանքներ իրականում չի ենթադրում, և դրա կատարման միակ երաշխիքը կարող է լինել միայն Դոնալդ Թրամփի հեղինակությունը: Ըստ էության, նույն միտքը հաստատել է Իլհամ

[3] «Իրականում Հայաստանն ու Ադրբեջանը մինչ օրս խաղաղության պայմանագիր չեն ստորագրել. ԱՄՆ-ում կայացած հանդիպումը միայն ձևականություն էր»: «Մեդուզա» (ռուս.), 10.08.2025, https://meduza.io/feature/2025/08/10/na-samom-dele-armeniya-i-azerbaydzhan-do-sih-por-ne-podpisali-dogovor-o-mire-vstrecha-v-ssha-byla-lish-formalnostyu (բեռնման օրը՝ 11.08.2025):

Ալիևը՝ հայտարարելով, որ Երևանի կողմից իր պարտավորությունների չկատարումը, մասնավորապես, երկրի Սահմանադրությունը փոխելու դժկամությունը, կդիտվի որպես «*անհարգալից վերաբերմունք Ամերիկայի Միացյալ Նահանգների նկատմամբ*»[4]: Սա նշանակում է, որ ԱՄՆ-ը Դոնալդ Թրամփի օրոք կարող է խախտումն ընկալել որպես անհարգալից վերաբերմունք իր հասցեին և դիմել «*խախտողի*» խիստ պատժի: Սակայն նույն աստիճանի հավանականությամբ Վաշինգտոնը կարող է պարզապես ափսոսանք հայտնել կողմերին հաշտեցնելու ձախողված փորձի համար և այլ քայլեր չձեռնարկել: Տեսականորեն, այս տարբերակն ավելի հավանական է, քանի որ ԱՄՆ-ի գերխնդիրը ոչ թե Ադրբեջանի և Հայաստանի միջև պարտադրված վերջնական խաղաղության հաստատումն է, ինչը կպահանջի բոլոր քաղաքական-դիվանագիտական ռեսուրսների շտապ հավաքագրում, այլ՝ տարածաշրջանում հակամարտային իրավիճակի կառավարման բուն փաստը, ինչը տասնամյակներ շարունակ անում էր Ռուսաստանը: Վաշինգտոնում հասկանում են, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում ՌԴ-ի, Իրանի և Թուրքիայի հավակնությունների առկայության դեպքում ԱՄՆ-ի հովանու ներքո կայուն խաղաղության հասնելն այս փուլում անիրատեսական խնդիր է, որի լուծման անկեղծ մտադրությունները կարող են ամերիկացիներին ներքաշել ծանր, ռեսուրսատար և ուժեր սպառող պայքարի մեջ: Սակայն ցուցադրական խաղաղապահության քողի տակ հակամարտայնության ներուժի կառավարումը և խնդրի ժամանակային երկարաձգումը կարող են նպաստել տարածաշրջանում ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացմանը և սեփական շահերից ելնելով՝ Ռուսաստանի ու Իրանի դեմ աշխարհաքաղաքական մեծ խաղում ծխացող խնդրի պահպանմանը: Վաշինգտոնը չունի որևէ երաշխիք, որ ամերիկյան ջանքերի հաշվին երկարատև խաղաղության հաստատումը հեռանկարում չի հանգեցնի Մոսկվայի և Թեհրանի հետ Բաքվի հարաբերությունների կարգավորմանը և չի բացի Չինաստանի ազատ մուտքը դեպի Մերձավոր Արևելք ու Եվրոպա: Փոխարենը վստահություն կա, որ «*Թրամփի երթուղին*» ԱՄՆ-ին կապահովի տարածաշրջանային դասավորություններում անվիճելի գերակայություն ու վերահսկողություն Հարավային Կովկասի նկատմամբ՝ անկախ լիակատար խաղաղության ճանապարհին Երևանի և Բաքվի հաջողությունների աստիճանից: Ուստի պետք է հստակ հասկանալ, որ վաշինգտոնյան հանդիպումն ԱՄՆ–ի համար նշանակալից է դարձել ոչ թե խաղաղապահության համատեքստում, այլ Արևելք–Արևմուտք և Հյուսիս–Հարավ առանցքներով ռազմավարական կարևոր տարածաշրջանային հաղորդակցությունների նկատմամբ ամերիկյան վերահսկողության հաստատման հեռանկարի առնչությամբ:

[4] «Իլհամ Ալիև. «Չեմ կասկածում, որ ՀՀ Սահմանադրությունից կհեռացվեն տարածքային պահանջները»: Oxu.az (ռուս.), 09.08.2025, https://oxu.az/ru/politika/ilham-aliev-ne-somnevayus-chto-iz-konstitucii-armenii-budut-isklyucheny-territorialnye-pretenzii (բեռնման օրը՝ 11.08.2025):

Այսպիսով, «*Թրամփի երթուղու*» մասին համաձայնագիրը դարձավ ԱՄՆ-ի գլխավոր քաղաքական-դիվանագիտական ակտիվը, որը ձեռք է բերվել հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման միջնորդության դիմաց: Նախագիծը ներկայացվել է որպես խաղաղության հասնելու համալիր պայմանների մաս, սակայն իրականում ամեն ինչ հակառակն է. Վաշինգտոնը նախաձեռնել է կողմերի հաշտեցման գործընթաց՝ տարածաշրջանում իր կիրառական ռազմաքաղաքական ներկայությունը օրինականացնելու համար: Ակնհայտ է դառնում, որ իրականում մասնավոր ընկերությունը, որը պետք է իրականացնի երթուղու կառավարումը, և ՄՌԸ-ն (*Մասնավոր ռազմական ընկերություն*), որը նախատեսված է ամբողջ նախագծի անվտանգությունն ապահովելու համար, ոչ այլ ինչ են, քան կառույցներ, որոնք աշխատում են սերտ համակարգմամբ և ԱՄՆ-ի ուժային և հետախուզական մարմինների հովանու ներքո:

Խոսքը ԱՄՆ-ի բանակի փաստացի մուտքի մասին է տարածաշրջան, քանի որ աշխարհում ամերիկացիների կողմից կառուցված իրենց ռազմակայաններն ու հատուկ հետաքրքրություն ներկայացնող գոտիները քողարկելու համակարգը ենթադրում է, որ TRIPP-ի և դրա աշխատանքը սպասարկող ՄՌԸ-ի պաշտպանության համար կստեղծվեն լրացուցիչ ռազմական ենթակառուցվածքներ և լոգիստիկ հաղորդակցություններ, որոնք անհրաժեշտության դեպքում կապահովեն ուժերի և միջոցների օպերատիվ տեղափոխումը Սյունիք: Չի բացառվում, որ ԱՄՆ-ը ծրագրում է տեսանելի ապագայում Հայաստանի և Ադրբեջանի հետ համապատասխան փաստաթղթեր ստորագրել իրենց տարածքներում ամերիկյան զինվորականների որևէ ձևով տեղակայման մասին՝ շրջանցելով նրանց ներքին օրենսդրության (Ադրբեջան) և դաշինքի պարտավորությունները (Հայաստան) արգելող դրույթները: Ակնկալվում է նաև, որ Պենտագոնը կմշակի «*Թրամփի երթուղու*» օդային պաշտպանության հատուկ ծրագրեր՝ ներգրավելով Արևմտյան Մերձսևծովյան տարածաշրջանում, Թուրքիայում և Լևանտի ու Կարմիր ծովերում պարեկություն իրականացնող ավիակիր խմբավորումները: Այսպիսով, Վաշինգտոնի համար TRIPP-ն իրենից ներկայացնելու է ոչ թե առևտրային նախագիծ, այլ՝ ռազմավարական նշանակության օբյեկտ, որի միջոցով ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ազդեցությունը կարտացոլվի ողջ Սևծովյան-Կասպյան տարածաշրջանում: Դա նշանակում է ՆԱՏՕ-ի լիարժեք ներդրում տարածաշրջանում՝ առանց համապատասխան պաշտոնական պայմանագրային հիմքերի, բայց Դաշինքի ուժերի և միջոցների ծավալման բոլոր փաստացի հատկանիշներով:

Հայաստանի և Ադրբեջանի համար «*Թրամփի երթուղու*» կառուցման հետ կապված ձեռքբերումների և օգուտների կամ կորուստների ու թաքնված սպառնալիքների հարցը պահանջում է առանձին վերլուծություն, որը դուրս է սույն հրապարակման շրջանակներից: Ահա այստեղ պետք է դիտարկել տարածաշրջանային երկրների արձագանքը և վաշինգտոնյան հռչակագրի արդյունքները վերլուծել դրանց

ռազմավարական շահերի տեսանկյունից՝ ելնելով այն խոսույթից, որ ԱՄՆ-ը հաջող քաղաքական և դիվանագիտական համադրության արդյունքում պատրաստվում է ի ցույց դնել իր լիարժեք և գերիշխող ներկայությունն հիմնական տարածաշրջանում:

2. Տարածաշրջանային դերակատարների արձագանքը

2.1. *Վրաստան*

Վաշինգտոնյան հանդիպումից անմիջապես հետո Վրաստանի ԱԳՆ-ն հանդես է եկել հայտարարությամբ, որի մեջ «*աջակցություն է հայտնում տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանն ու համագործակցության ամրապնդմանը, ինչն ուղղված կլինի Հարավային Կովկասի կայունությանն ու բարգավաճմանը*»[5]: Արտահայտվում է նաև այն միտքը, որ «*այս պատմական իրադարձությունը շղթայական ռեակցիայի ազդեցություն կունենա Սևծովյան տարածաշրջանում և ամբողջ աշխարհում հակամարտությունների խաղաղ կարգավորման տեսանկյունից*»: Ակնհայտ է, որ Թբիլիսին նկատի ունի վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունները, որոնց լուծման վրա կարող է դրական ազդեցություն ունենալ ԱՄՆ-ի միջնորդությամբ մեկնարկած հայ-ադրբեջանական «*խաղաղ գործընթացը*»:

Սակայն Վրաստանում փորձագիտական շրջանակներում կարծիք են հայտնում, որ չնայած ընդգծված դրական արձագանքներին, հանրապետությունում իշխող «Վրացական երազանք» կուսակցությունն իրականում խիստ մտահոգված է տարածաշրջանի գործերին ԱՄՆ-ի բացահայտ միջամտության և TRIPP-ի կառավարման միջոցով այստեղ վերահսկողություն հաստատելու փաստով: Դրանով Վաշինգտոնը խաղից դուրս բերեց և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային, որոնք հույս ունեին գերակայություն հաստատել առանցքային տարանցիկ երթուղու նկատմամբ[6]: ԱՄՆ-ի և Եվրամիության հետ հարաբերությունների կտրուկ վատթարացման համապատկերում պաշտոնական Թբիլիսիի մտահոգությունն ակնհայտորեն արդարացված է, քանի որ տարածաշրջանում ամերիկյան ներկայությունը և Վաշինգտոնի ազդեցության բազմակի ուժեղացումը Բաքվի և Երևանի վրա զգալիորեն խաթարում են Հարավային Կովկասում միակ իշխող ուժի կարգավիճակում հայտնված, հավաքական Արևմուտքի հետ լարված հարաբերությունների մեջ գտնվող «Վրացական երազանքի» դիրքերը: Մյուս կողմից, վրացական ընդդիմությունը խիստ սաստկացնում է հասարակության անհանգստությունը

---

[5] «Պատմական համաձայնագիր. Վրաստանի ԱԳՆ-ն՝ Հայաստանի և Ադրբեջանի պայմանավորվածությունների մասին»: Sputnik Грузия (ռուս.), 09.08.2025, https://sputnik-georgia.ru/20250809/istoricheskoe-soglashenie--mid-gruzii-o-dogovorennostyakh-armenii-i-azerbaydzhana-294478575.html (բեռնման օրը՝ 12.08.2025):

[6] «Վրացի վերլուծաբան. «Վրացական երազանքը» մտահոգված է Վաշինգտոնում տեղի ունեցող գործընթացներով»: Arminfo.info (ռուս.), 12.08.2025, https://arminfo.info/full_news.php?id=93799 (բեռնման օրը՝ 12.08.2025):

Վրաստանի տարածքով տարանցիկ փոխադրումների ծավալների փլուզման մեծ հավանականության կապակցությամբ: Ըստ այդմ. «*Թրամփի երթուղին*» իրագործվելու դեպքում կարող է դեպի իրեն ձգել Վրաստանի տարածքով անցնող ապրանքների հոսքի զգալի մասը: Այս մասին բազմիցս արտահայտվել է նաև անազատության մեջ գտնվող նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին՝ նախազգուշացնելով, որ հանրապետությունը կհայտնվի Հարավային Կովկասում «*անդամահատված օրգանի*» դերում[7]:

Սակայն, վրացական համակարգային ընդդիմությունը ողջունում է հայ-ադրբեջանական «*խաղաղ գործընթացի*» բուն փաստը ՝ համարելով, որ այն նպաստում է ՌԴ-ի վերջնական վտարմանը տարածաշրջանից: Մոտեցումների նման երկվությունը վկայում է, որ Հարավային Կովկասում նոր գործընթացների նկատմամբ Վրաստանի վերաբերմունքը ձևավորվում է այդ հանրապետությունում իշխանության համար ներքաղաքական պայքարի պրիզմայով, որի ընթացքն ուղղակիորեն կախված է տարածաշրջանում Վաշինգտոնի խաղաղարար նախաձեռնության հաջողությունից կամ ձախողումից:

2.2. Իրան

Վաշինգտոնյան հանդիպման արդյունքների վերաբերյալ Իրանի արձագանքները նույնպես խիստ հակասական են: Ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում այդ երկրի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ աչքի ընկան «*Թրամփի երթուղու*» մասին տրամագծորեն հակառակ հայտարարություններով՝ միաժամանակ դրական գնահատելով Երևանի և Բաքվի միջև «*խաղաղ գործընթացը*»: Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանը կարծիք է հայտնել, որ, այսպես կոչված, «*Զանգեզուրի միջանցք*» նախագիծը, որը ստացել է TRIPP պաշտոնական անվանումը, «*չնայած ՀԼՄ-ների հաղորդագրություններին, այնքան էլ սպառնալիք չէ, ինչպես դա մատուցվել էր, և դրանում հաշվի են առնված իրանական առանցքային շահերը, ինչպիսիք են (Հայաստանի) տարածքային ամբողջականության պահպանումը և տրանսպորտային ուղիների կայունության հաստատումը՝ առանց հյուսիսային շրջանների բաժանման*»: Արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ընդհանրապես հայտարարել է, որ «*Զանգեզուրի միջանցքի հարցն ամբողջությամբ հանվել է* (վաշինգտոնյան հանդիպման) *օրակարգից*»: Նրա խոսքով՝ տարանցիկ երթուղու կառուցման նախագիծն իրականացնելու է Հայաստանում գրանցված և հայկական օրենքների համաձայն գործող հայ-ամերիկյան ընկերությունը:

Իրանի քաղաքական դաշտի մեկ այլ խոշոր գործիչ՝ Իրանի գերագույն առաջնորդի խորհրդական Ալի Աքբար Վելայաթին, ի տարբերություն Մ. Փեզեշքիանի և Ա. Արաչիի

[7] Գ. Էլիբեկյան, Մ. Հովսեփյան, «Տարածաշրջանային հաղորդակցության ուղիներ. ինչպես է փոխվում Վրաստանի տարանցիկ դերը նոր իրողությունների լույսի ներքո»: JAM news (ռուս.), 09.10.2025, https://jnews.ge/133293/ (բեռնման օրը՝ 13.08.2025):

լավատեսության, հանդես է եկել նախազգուշացմամբ, որ Թեհրանը թույլ չի տա Հայաստանի Սյունիքի մարզով «*Թրամփի միջանցքի*» ստեղծումը, քանի որ, ըստ նրա, այդ նախագիծը ոչ միայն կխախտի Հայաստանի տարածքային ամբողջականությունը, այլև կարող է հանգեցնել տարածաշրջանային աշխարհաքաղաքական կայունության վերացմանը[8]: Ավելի կոշտ են արտահայտվել ԻՀՊԿ-ի (Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս) գեներալիտետի ներկայացուցիչները: Օրինակ՝ ԻՀՊԿ ղեկավարի քաղաքական հարցերով տեղակալ, գեներալ Յադոլլահ Ջավանին նախազգուշացրել է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին, որ վստահելով ԱՄՆ-ին՝ «*նրանք կատարել են նույն սխալը, ինչ Ուկրաինայի առաջնորդ Վլադիմիր Զելենսկին*»[9]: Նման համեմատությունն ակնհայտորեն մատնանշում է իրանցի արմատականների ծայրահեղ նյարդայնությունը, որոնք Հայաստանն ու Ադրբեջանը դիտարկում են որպես Իրանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Վաշինգտոնի և նրա դաշնակիցների հետ ուղիղ բախման պոտենցիալ թատերաբեմ:

TRIPP-ի շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունների առնչությամբ ծայր աստիճան հակասական արձագանքները ցույց տվեցին, թե որքան խորն է ԻԻՀ-ում բարեփոխականների և պահպանողականների միջև պառակտումը: Ըստ էության, դրանք վերջնականապես բացահայտեցին Իրանում երկիշխանության փաստը, ինչը խոչընդոտում է արտաքին քաղաքականության բոլոր առանցքային հարցերի վերաբերյալ միասնական օրակարգի մշակմանը: Հարավային Կովկասում մեկնարկած գործընթացների մասով բարեփոխականները մտավախություն ունեն, որ պահպանողականների արմատական դիրքորոշումը միայն կսաստկացնի Թեհրանի թշնամիների գրգռվածությունն Արևմուտքում և այնտեղ կավելացնի Իսլամական Հանրապետության դեմ երկրորդ, առավել վճռական ռազմական արշավի կողմնակիցների շարքերը: Իրենց հերթին՝ կղերական վերնախավի ներկայացուցիչներն ու նրանց մոտ կանգնած ուժայինները կարծում են, որ հաջորդ պատերազմն անխուսափելի է, իսկ «*Թրամփի երթուղուն*» իրանական համաձայնությունը միայն կհեշտացնի Իրանը հյուսիսից մեկուսացնելու և երկրին հարվածելու համար հզոր ռազմական հենադաշտ ստեղծելու արևմտյան թշնամիների խնդիրը: Բացի այդ, արմատականները կարծում են, որ նույնիսկ եթե Իրանին հաջողվի ինչ-որ հրաշքով խուսափել երկրի վրա հերթական հարձակումից, «*Թրամփի երթուղին*» կզրոյացնի Թեհրանի բոլոր ջանքերն ու աշխատանքը՝ ԻԻՀ-ն Հյուսիս–Հարավ և Արևմուտք–Արևելք առանցքներով անդրմայրցամաքային առևտրի գլխավոր տարանցիկ հանգույցի

[8] «Իրանը բաժանված է «Թրամփի ճանապարհի՝ հարցով. աջակցությունից մինչև կտրական բողոք»: Վերելք, 11.08.2025, https://verelq.am/ru/node/163202 (բեռնման օրը՝ 13.08.2025):

[9] «Իրանում մեկնաբանել են «Թրամփի կամրջի» սպառնալիքների մասին լուրերը»: Газета.ru (ռուս.), 11.08.2025, https://www.gazeta.ru/tags/geo/iran.shtml (բեռնման օրը՝ 13.08.2025):

վերածելու ուղղությամբ: Ըստ նրանց՝ 100 միլիոնանոց երկրի տնտեսապես խեղդամահ լինելը պատերազմից լավ չէ և նրա անխուսափելի փլուզման պատճառ կդառնա:

2.3. *Ռուսաստան*

Վաշինգտոնյան հանդիպման արդյունքների վերաբերյալ ամենապասիվ պաշտոնական դիրքորոշմամբ առայժմ առանձնանում է Ռուսաստանը: Ամենաբարձր մակարդակով միակ արձագանքը հնչել է ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի ելույթում, որում նա դրական է գնահատել Երևանի և Բաքվի առաջընթացը դեպի խաղաղություն, սակայն հարկ է համարել ընդգծել, որ այդ գործընթացը, ինչպես նաև տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման շուրջ քննարկումների շրջանակն սկսվել է Մոսկվայի միջնորդությամբ՝ 2020 թվականին: Ընդհանուր առմամբ, ԱԳՆ ներկայացուցիչն ուղղակիորեն չի դատապարտել TRIPP-ի նախաձեռնությունը, սակայն հստակ ակնարկել է, որ նման նախագիծը, ինչպես և Երևանի ու Բաքվի միջև խաղաղության կնքման մյուս բոլոր պայմանները, պետք է հաշվի առնի տարածաշրջանային դերակատարների (Ռուսաստան, Թուրքիա, Իրան) շահերը և չխախտի անվտանգության հավասարակշռությունը Հարավային Կովկասում[10]: Մ. Զախարովայի կողմից հստակ ձևակերպումներից խուսափելը և նրա հայտարարության ուղերձների երկիմաստությունը կարելի է բացատրել ոչ թե դիրքորոշման անորոշությամբ, ինչպես շտապեցին հայտարարել շատ փորձագետներ, այլ Դ. Թրամփի և Վ. Պուտինի Ալյասկայում կայանալիք գագաթնաժողովի նախաշեմին Մոսկվայի սպասողական մարտավարությամբ: Ակնհայտ է, որ այս հանդիպմանը քննարկվող հարցերի շրջանակը չպետք է սահմանափակվեր Ուկրաինայի շուրջ ստեղծված իրավիճակով, այլ ընդգրկեր ռուս-ամերիկյան հարաբերությունների և շահերի ամբողջ օրակարգը: Պետք է հասկանալ, որ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցը և TRIPP նախաձեռնությունը նույնպես սպասում էին իրենց քննարկմանը Ալյասկայում և հաստատ ոչ առանց երկու կողմերի սուր հարցադրումների: Ամեն դեպքում, Ռուսաստանի նախագահը չէր կարող իրեն թույլ տալ ամերիկացի գործընկերոջ հետ հանդիպման նախօրեին կտրուկ բարձրացնել նախաձեռնության հետ անհամաձայնության հարցը կամ հավանություն հայտնել նախագծին: Առայժմ միայն թղթի վրա ամրագրված՝ *«Թրամփի երթուղին»* արդեն դարձել է ԱՄՆ-ի և ՌԴ-ի մեծ սակարկություններում օգտագործվող քաղաքական ակտիվ, և դրա իրականացման նկատմամբ Մոսկվայի վերաբերմունքը ամբողջովին կախված կլինի Ուկրաինայի և այլ խնդիրների շուրջ գերտերությունների ձեռքբերված կամ չձեռքբերված պայմանավորվածությունների ընդհանուր համատեքստից:

[10] «ՌԴ ԱԳՆ-ն դրական է գնահատել Վաշինգտոնում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հանդիպումը»: ARKA news agency (ռուս.), 09.08.2025, https://arka.am/news/politics/mid-rf-polozhitelno-otsenil-vstrechu-liderov-armenii-i-azerbaydzhana-v-vashingtone/ (բեռնման օրը՝ 13.08.2025):

Միևնույն ժամանակ, պաշտոնական Մոսկվայի սպասողական մարտավարությունը չխանգարեց նրան պատժամիջոցներ կիրառել Պետդումայի և Դաշնության խորհրդի որոշ քաղաքական շրջանակների, իշխանամետ լրատվամիջոցների և փորձագիտական լայնածավալ խմբերի նկատմամբ՝ Դ. Թրամփի «*միջանցքի նախաձեռնությունը*» վարկաբեկելու արշավ սկսելու համար: ՌԴ-ում հաջողությամբ գործի են դրվում գաղափարներ այն մասին, որ Վաշինգտոնը, ըստ էության, TRIPP նախագիծը «*գողացել է*» Մոսկվայից, որը բացառիկ իրավունք ուներ միանձնյա վերահսկողություն հաստատել Հայաստանի ռազմավարական նշանակություն ունեցող Սյունիքի մարզի նկատմամբ: Վերը նշված շրջանակների կարծիքով՝ Երևանն ու Բաքուն խաբեցին Մոսկվային և արժեզրկեցին տարածաշրջանում արդար, երկարատև խաղաղություն հաստատելու նրա անկեղծ ձգտումները՝ ըստ էության արևմտյան ճամբար անցնելով և իրենց ճակատագիրը վստահելով ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների արկածախնդիր, չափազանց վտանգավոր քաղաքականությանը:

Հանուն արդարության պետք է նշել, որ ձայներ են հնչում նաև Ռուսաստանից , որոնք օբյեկտիվ են գնահատում Հարավային Կովկասում «*ռուսական ճախողման*» պատճառները: Մի շարք անկախ փորձագետներ և քաղաքական գործիչներ միանգամայն իրավացիորեն նշում են, որ ռուսական միջնորդությունից Երևանի և Բաքվի հրաժարումն ու «*Թրամփի երթուղու*» շուրջ համաձայնությունները պայմանավորված էին Կրեմլի և Սմոլենսկի հրապարակի մշուշոտ քաղաքականությամբ, Հարավային Կովկասի քաղաքական և -դիվանագիտական ռազմավարության հստակ առաջնահերթությունների բացակայությամբ, Ն. Փաշինյանի և Ի. Ալիևի հետ մշտական սիրախաղերով, Թուրքիայի ճնշման տակ Ղարաբաղը զիջմամբ և տարածաշրջանում ՌԴ բնական դաշնակից Իրանի հետ մերձենալու անկեղծ մտադրությունների բացակայությամբ:

Այսպես թե այնպես, Ռուսաստանում շատ քաղաքական գործիչներ և փորձագետներ կարծում են, որ TRIPP-ը Ռուսաստանի համար չափազանց վտանգավոր նախաձեռնություն է, որն իրականում ՆԱՏՕ-ական տերությանը ներգրավում է Մոսկվայի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան, փակում ՌԴ-ի ելքը դեպի Մերձավոր Արևելք ու Հնդկական օվկիանոս և, շրջանցելով Ռուսաստանը, փակում «*Մեծ Մեփաքսի ճանապարհի*» «*Միջին միջանցքի*» լոգիստիկան: Ի թիվս այլոց, «*Թրամփի երթուղին*» նախագիծ է, որը թույլ կտա ԱՄՆ-ին և դաշնակիցներին վերջ տալ Կասպից ծովի՝ որպես ներքին ռուս-իրանական ծովի փաստացի կարգավիճակին, ապահովել Արևմուտքի և Թուրքիայի առաջընթացը դեպի Կենտրոնական Ասիա ու ճնշել Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցության վերջին մնացորդները ռազմավարական նշանակություն ունեցող ասիական այս տարածաշրջանում: Ընդհանուր առմամբ, TRIPP-ն իրենից ներկայացնում է բացակայող օղակ, այսպես կոչված, «*Անակոնդայի պլանում*», որի

իրականացումից հետո ՆԱՏՕ-ի համար Ռուսաստանի վերջնական «*խեղդամահ անելը*» պարզապես ժամանակի խնդիր կդառնա:

2.4. Թուրքիա

Առաջին հայացքից Թուրքիայի դիրքորոշումը միանշանակ է Հայաստանի և Ադրբեջանի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման և TRIPP-ի իրականացման հարցում: Վաշինգտոնում հռչակագիրը ստորագրելուց անմիջապես հետո Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանը հեռախոսազրույց է ունեցել իր ադրբեջանցի գործընկերոջ հետ, որի ընթացքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, գոհունակություն է հայտնել «*խաղաղության գործընթացի*» և Ի. Ալիևի առաջնորդական կարողությունների դրսևորման կապակցությամբ: Ի պատասխան՝ Ադրբեջանի նախագահը վստահություն է հայտնել, որ «*տրանսպորտային միջանցքը, որը կծառայի Ադրբեջանի հիմնական մասի և Նախիջևանի միջև անխոչընդոտ կապի հաստատմանը, կնպաստի ամբողջ տարածաշրջանի բարգավաճմանը*»[11]:

Միջազգային փորձագետները կարծիք են հայտնել, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմաններն ու «*Թրամփի երթուղու*» շուրջ պայմանավորվածությունները, առաջին հերթին, Անկարայի շահերից բխող գործարք են, և որ նա ինքը մեծապես նպաստել է նման արդյունքների հասնելուն: Անկարայի համար Սյունիքով անարգել միջանցքը ոչ միայն էքսկլավի կապն է «*մայրցամաքային*» Ադրբեջանի հետ և Թուրքիայի ցամաքային ելքը դեպի Կասպից ծով, այլև պարտադիր պայման է թյուրքական պետությունների միավորման գաղափարախոսական ծրագրի շրջանակներում ավելի լայնածավալ ռազմավարության համար: Այս համատեքստում միջազգայնագետներից շատերը հակված են Թուրքիային համարել TRIPP-ի գլխավոր շահառուն, առանց որի ԱՄՆ-ը չի կարող իրագործել Ռուսաստանին խեղդելու և, այսպես կոչված, «*Գլոբալ Հարավի*» միությունը կազմալուծելու իր դոկտրինը:

Սակայն, ինչպես պարզվեց, այդքան էլ միանշանակ չէ ամեն ինչ: Որոշ տվյալներով՝ «*Թրամփի երթուղին*» այնքան էլ այն չէ, ինչի վրա հույսը դրել էր Ռ. Էրդողանը՝ լիովին աջակցելով Ադրբեջանին, այսպես կոչված, «*Զանգեզուրի միջանցքի*» հարցում: Դա անուղղակիորեն հաստատում է նաև այն հանգամանքը, որ, ըստ պաշտոնական ամփոփագրի, Ի. Ալիևի հետ հեռախոսազրույցում նա որպես մեծ ձեռքբերում հիշատակել է միայն խաղաղության հռչակագիրն ու դրան առնչվող համաձայնագրերը, բայց չի անդրադարձել TRIPP-ի թեմային: Ի. Ալիևն էլ, ընդհակառակը, փորձել է Սյունիքում ամերիկյան հովանավորությունը զրուցակցին ներկայացնել որպես Բաքվի նշանակալի ձեռքբերում:

---

[11] «Ալիևն ու Էրդողանը քննարկել են ԱՄՆ-ում ստորագրված ադրբեջանա-հայկական հռչակագիրը»: Интерфакс (ռուս.), 09.08.2025, https://www.interfax.ru/world/1040493 (բեռնման օրը՝ 13.08.2025):

Եթե հավատանք վրացի վերլուծաբան Միրիան Միրիանաշվիլու տեղեկատվությանը, թուրքական վերնախավը իրականում չափազանց հիասթափված է վաշինգտոնյան հանդիպումից, քանի որ Երևանի և Բաքվի միջև համաձայնագրի ստորագրումը ի սկզբանե ծրագրվում էր իրականացնել Ստամբուլում՝ Ռ. Էրդողանի մասնակցությամբ: Սակայն, վերջին շաբաթներին տեղի ունեցած որոշակի փոփոխությունների արդյունքում Դոնալդ Թրամփը որոշել է «*խաղաղության հարթակը*» տեղափոխել Վաշինգտոն՝ դրանով իսկ հարված հասցնելով Թուրքիայի նախագահի ինքնասիրությանը և նրա քաղաքական ծրագրերին: Ակնհայտ է, որ նման որոշում է կայացվել գործընթացում Անկարայի դերը նսեմացնելու և տարածաշրջանում ձևավորվող նոր աշխարհաքաղաքական դասավորության գլխավոր շահառուների ցանկից նրան դուրս մղելու նպատակով: Թուրքական ԶԼՄ-ները շատ զգուշավոր են լուսաբանում այս թեման՝ ակնհայտորեն հաշվի առնելով հենց նախագահի և նրա շրջապատի զսպվածությունը, սակայն որոշ ընդդիմադիր շրջանակների հայտարարությունները վկայում են, որ Թուրքիայի համար ոչ միանշանակ իրավիճակ է ստեղծվում՝ կապված Հայաստանի տարածքով անցնող երթուղու ամերիկյան վերահսկողության հետ: Մասնավորապես, թուրքական *Vatan Partisi* կուսակցության առաջնորդ Դողու Փերինչեքն իրանական *Mehr News* գործակալությանը տված հարցազրույցում նշել է, որ «*Զանգեզուրի միջանցքը*» (տվյալ դեպքում նկատի ունի TRIPP-ը) *ԱՄՆ-ի և Իսրայելի նախաձեռնությունն է և սպառնալիք է ներկայացնում ոչ միայն Իրանի, այլև Թուրքիայի անվտանգության համար*»[12]: Նրա խոսքով, Թուրքիան արդեն շրջապատված է ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմական ու քաղաքական ազդեցությամբ՝ Էգեյան ծովից և Արևելյան Միջերկրական ծովից մինչև Հյուսիսային Սիրիա ու Հյուսիսային Իրաք, իսկ Կովկասում միջամտությունը կստեղծի լրացուցիչ վտանգ: Դ. Փերինչեքը միշտ ներկայացել է որպես Ռուսաստանի հետ մերձեցման և «*իմպերիալիստական Արևմուտքի*» հետ չափազանց զգուշավոր հարաբերությունների կողմնակից, սակայն նրա հայտարարությունը չի կարելի տառանիշային արձագանք անվանել, քանի որ նրա փաստարկները զուրկ չեն օբյեկտիվ տրամաբանությունից:

Ամերիկյան վերահսկողության տակ գտնվող «*Թրամփի երթուղին*», անշուշտ, մեծացնում է Թուրքիայի տեսական հնարավորությունները Կենտրոնական Ասիայում իր ազդեցության ուժեղացման գործում: Սակայն, մյուս կողմից, այն վերածվում է Վաշինգտոնի կողմից Անկարայի վրա ճնշման ոչ պակաս լուրջ լծակի և սահմանափակում է Թուրքիայի ինքնուրույնությունը Հարավային Կովկասում ու Կասպից տարածաշրջանում ռազմավարություն մշակելու հարցում: Թուրքիային նեղացրել են՝ զրկելով իր համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան տանող

[12] «Դողու Փերինչեք. «Զանգեզուրի միջանցքը՝ ԱՄՆ-ի և Իսրայելի նախագիծն է, որը սպառնում է Թուրքիային և Իրանին» (ռուս.): Caucasus-chronical.com, 11.08.2025, https://caucasus-chronicle.com/2025/08/11/5627/ (բեռնման օրը՝ 13.08.2025):

դռան «*անձնական բանալիներից*», այն դեպքում, երբ ինքը՝ Անկարան, մեծագույն ջանքեր է գործադրել հենց այդ դուռը տեղադրելու համար: Ուստի, հազիվ թե ճիշտ լինի Անկարայի անվերապահ հաղթանակը համարել Սյունիքի երթուղին ԱՄՆ-ի կառավարմանը հանձնումը: Այս հարցում Թուրքիայի հաջողության աստիճանը կախված կլինի նրա պատրաստակամությունից՝ համընթաց խաղալու ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությանը և Վաշինգտոնի ռազմավարությանը հակասող ինքնուրույն մենախաղեր չնախաձեռնելուց:

Հարկ է նաև նշել, որ Վրաստանում, Հայաստանում և Իրանում մի շարք վերլուծաբաններ կարծում են, թե չպետք է գերագնահատել «*Թրամփի երթուղու*» տնտեսական դերը, հետևաբար նաև դրա ռազմավարական նշանակությունը: Նրանց կարծիքով՝ այս հարցում վերջին խոսքը կմնա Չինաստանին: Դժվար թե Պեկինը համաձայնի, որ «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհի՛ «Միջին միջանցքը» փակվի ամերիկացիների կողմից վերահսկվող երթուղու վրա: Վրաստանում արձանագրվում է ենթակառուցվածքային շինարարական բում, որն ուղղված է Կասպից ծովի ադրբեջանական նավահանգիստներից դեպի Սևծովյան ափեր, Թուրքիա և Եվրոպա բեռնափոխադրումների տարանցիկ կարիքների բավարարմանը: Զուգահեռաբար Թեհրանը շինարարական աշխատանքներ է իրականացնում Սյունիքի երթուղին կրկնօրինակող իրանական միջանցքով՝ սահմանային Արաքս գետի աջ ափին: Փորձագետները պնդում են, որ հենց ՉԺՀ-ն, որն ապահովում է առևտրի և ապրանքների հոսքի առյուծի բաժինն Արևելք-Արևմուտք առանցքի երկայնքով, կթելադրի այլընտրանքային TRIPP երթուղիների ընտրությունը, նույնիսկ եթե դրանք զիջեն գների և փոխադրման ժամկետների շահութաբերությանը:

Որոշակիորեն՝ այդ ենթադրություններն իրենց տակ իրական հիմքեր ունեն, սակայն հազիվ թե ԱՄՆ-ում հաշվի չառան այդ հնարավորությունը և համապատասխան հետևություններ չարեցին: Թրամփի վարչակազմի և ամերիկյան ընտրանու համար TRIPP-ի արժեքը ոչ այնքան նրա տնտեսական շահութաբերության մեջ է (չնայած դրան, ԱՄՆ-ն բոլոր ջանքերը կգործադրի նրա անխափան աշխատանքի համար), որքան ռազմավարական դրության մեջ, որը թույլ է տալիս ռազմաքաղաքական վերահսկողություն հաստատել տարածաշրջանի նկատմամբ՝ այդտեղ «*3+3 հարթակի*» նման տեղական դաշինքներ թույլ չտալու, հակամարտայնությունը կառավարելու (իրենով փոխարինելով Ռուսաստանին) և Առաջավոր Ասիայում չինական քաղաքական-տնտեսական առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Բայց այս ամենը՝ պայմանով, որ «*Թրամփի երթուղին*» և հայ-ադրբեջանական աշխարհն իրականում իրականություն դառնան քրտնաջան աշխատանքի արդյունքում, այլ ոչ թե մնան Նոբելյան մրցանակի մասին երազող ԱՄՆ խիստ տարօրինակ առաջնորդի հերթական անցողիկ մոլուցքը: